

## ԿԱԴՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### 2011 թվականի երկրորդ կիսամյակում կատարված կադրային աշխատանքների հաշվետվություն

#### 2011 թվականի երկրորդ կիսամյակում կիսամյակում ՀՀ ԱՎԾ աշխատակազմում՝

- **աշխատանքի է նշանակվել 24 մարդ, որից՝**

քաղաքացիական ծառայության պաշտոններում՝	15
քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում՝	6
տեխնիկական սպասարկում իրականացնող պաշտոններում՝	3

- **աշխատանքից ազատվել է 22 մարդ, որից՝**

ՎՊԻՍ անդամ	1
քաղաքացիական ծառայողներ	16
քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում նշանակվածներ՝	4
տեխնիկական սպասարկում իրականացնող պաշտոններում՝	1

#### Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար ՀՀ ԱՎԾ աշխատակազմը անցկացրել է 9 մրցույթ, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմը՝ 2 մրցույթ:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի կողմից համապատասխան դասային աստիճան է շնորհվել առաջատար պաշտոն զբաղեցնող 1 քաղաքացիական ծառայողի:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի հրամանով ՀՀ քաղաքացիական ծառայության առավելագույն դասային աստիճաններ է շնորհվել 4 քաղաքացիական ծառայողի:

Վերապատրաստվել և ատեստավորվել են հետևյալ թվաքանակով քաղաքացիական ծառայողներ.

	Գլխավոր պաշտոններ	Առաջատար և կրտսեր պաշտոններ
Վերապատրաստվել են՝	8	27
Ատեստավորվել են՝	3	14

Ուսումնական և արտադրական պրակտիկա է կազմակերպվել Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի պետական ագրարային համալսարանի, Գյումրու պետական մանկավարժական համալսարանի, «ԷԼԼՆԱՐ» Ռուս-հայկական դիստանցիոն տեխնոլոգիաների կենտրոն ՍՊԸ-ի, Երևանի «Մովսես Խորենացի» համալսարանի, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի թվով 93 ուսանողների համար: ՀՀ ԱՎԾ նախագահի հրամանով երկու քաղաքացիական ծառայող խրախուսվել է շնորհակալագրով: